յել է հարազատ որդւոյ դարձելոյ առ ծնողն. և վերստին չնորհեցաք զիւր եպիսկոպոսական պատիւն և իշխանութիւնն։ Այսուհետեւ իբրեւ զմի հարազատ և հնազանդ որդւոց մերոց է. վասն որոյ ընկալարուք զդա բազում սիրով և յոյժ մեծարանօք, և ամենայն կարողութեամբ հպատակ և հնազանդ լերուք դմա. և ի հոգեւոր գործ մի՛ խառնիք՝ որ ոչ վերաբերի առ ձեզ. դորայ է գործ։ Մի՛ ոք իցէ ընդդիմացօղ կամ հակառակօղ դմա։ Եւ եպիսկոպոսական հաս և իրաւունքն յինքն հասուցանէք անթերի։ Այսուհետեւ ով ոք խռովութեան պատճառ լինի՝ թէ ի քահանայից թէ ի դատաւորաց և թէ յաշխարհականաց, չարաչար բանադրանս ընդունելոց է, և պատուհասակոծ լինելոց։ Սիրոյ և խաղաղութեան ջանացարուք. և վասն ամենայն սնոտի և ընդունայն բանից մի՛ վրդովիք և աղմկիք. այլ երկայնամիտ լերուք, և զօգուտն խորհեցարուք։ Ահա ամենայն խորհրդոց մերոց սենեակ Պարոն Խաչքօն դատաւոր ձեր. զմեր ամենայն խորհուրդ ի Պարոն Խաչքօէն իմանայք. և զոր ինչ ի մերմէ կողմանէ ասասցէ ձեզ՝ ունկնդիր լինիք։ Ահա ի մերմէ կողմանէ Ս. Էջմիածնայ երեսփոխան կարգեցաք զՊարոն Խաչքօն. որ զինչ Էջմիածնայ հաս և իրաւունք լիցի, թէ դանձանակ թէ ողորմութիւն, թէ յիշատակ, բովանդակն Պարոն Խաչքօն ժողովեսցէ. և պարոնտիրի և ձերով զիտութեամբ և կնքով ի Ս. Էջմիածինն հասուցէ։ Ընդ ամին և զայս խընդրեմ, զի Թօխաթացի Խոճայ Մարկոսի որդի Սիմէօն չէլէպին՝ որ այս բարի բանիս պատճառ եղեւ, և պարոնտիրին՝ դրամով օգնեաց, որ եկն և խաղաղութիւն եղեւ, զնորա դրամն ըստ արժանոյն առաւելապէս յինքն հասուցանէք. և ըստ երախտեացն երախտահատոյց լինիք, պատուով և մեծարանօք։

Գրեցաւ թուղթս ի Թվին Հայոց ՌՃԲ, յապրիլ ամսոյ ԺԵ, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս։

ԵՍ ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՁԵՌՄԲՍ ԳՐԵՑԻ։